ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-5

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տեսամոնիտորների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 05.08.2026թ. N 491/Ի-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստը տեղի ունեցավ 18.09.2026թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Իսկանդարյանը, գնահատող հանձնաժողովի անդամ Հ.Երզինկյանը և քարտուղար Գ.Ղազարյանը: Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ Ն.Գյոնջյանը:

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

-Գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Իսկանդարյանը տեղեկացրեց, որ սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը՝ 09.09.2026թ. գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցին է ներկայացրել պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն ընտրված մասնակից ճանաչված «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչպես նաև իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը չի ներբեռնել էլեկտրոնային (e-Auction) համակարգ:

-Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն հայտարարել չկայացած:

-«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնել նախատեսված ընթացակարգ՝ «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Իսկանդարյան

Անդամներ՝ Հ.Երզինկյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան